լեան հարաւոյ, և անդր քան զայն անտառ իմն՝ որպէս թուիր ծառախիտ, անդ եզերեցի գնալ, թերեւս ընդ թաւ սաղարթեաւ ծառով իմիւ նպաստաւորիցէի ի յորդութենէ անձրեւոյն՝ որ ստիպէր։ Բայց հասեալ անդէն՝ գտի զընդդիմակն. զի ոչ միայն ցանցառք էին ծառք, ոստք նոցին և սաղարթք, այլ և ի ներքոյ նոցա ջուր ծովացեալ յանձրեւոյ, զոլով տեղին գոգ և զիճային մարգ։ Վրիպեցեալ ուրեմն ի յուսոյ, հարկեցայ դիմել և անդր, զուցէ ուրեք գտանիցիւր սիրտուն. և ոչ էր. այլ և մառախուղ թանձր շրջաղեղաւ, թէ և անձրեւն մեղմացաւ, և հողմն ցրտաշունչ յարեաւ. որով պատճառաւ մոլորեցեալք և թափառականք՝ այսր և անդր շրջաբերեցեալք ընդ խորափիտս, ձորակս և հեղեղատս, մերթ շաւղաք մերթ անհետիւք վայրաք տատանեցաք մինչեւ ցհասարակ օր, որպէս համարէաք։ Այս մառախուղն մերժեցեալ, այլ անձրեւն յորդեցեալ՝ նշմարեցի զիմն ի մէջ խարցին՝ մարդանման. և մինչ զանգիտելով զտեղի առեալ յղեցի զսպասաւորն ի զնին, պատուիրանաւ զգուշաբար հպելոյ և տնտղելոյ, ահա կոճ ծառի էր. տես, թէ երկիւղն զինչ ոչ երեւակայացուցանէ մարդոյ։

Այսր կալաւ զիս տարակոյս մեծ՝ ի խորհելն զներկայն և զապագայն. զի անձրևեալ ոչ դադարէր. զի զգենլիք ամենեքեան թացեալք մինչեւ ցչապիկ՝ ծանրացեալք էին ի վերայ իմ, յորոց կաթէր ջուրն. զի ցուրտն ստիպէր, զի չինութիւն ուրեք ոչ երեւիր, ի նպաստ այնքանոյ անճարակութեան. զի տեսանէի զճախին ընդարձակ ի ձորակին՝ ընդ որ անցանել մարթ էր, որ ինձ էր անհնարին. զի զտեղի առնուլ զանգիտէի, զուցէ ի ձեռս Պուղտանցւոց աւազակաց կամ Ավետաց ցրուեցելոց ամենուրեք յապուր՝ անկանիցէի։ Ի մէջ այսպիսեաց ուրեմն վշտաց փաղակացեալ, մինչ վարանէի տխրագին, սպասաւորս՝ որ էր առոյգ և ուժնդակ երիտասարդ, քաջալերեալ զիս՝ էառ ի շալակ իւր՝ իբր զտղայ իմն, և անցուցեալ ընդ ճախինն, և հանեալ ի վեր ի բարձրաւանդակի միում դետեղեաց. ինթէրիմ (մինչ այս մինչ այն) անձրեւն սկսաւ նուազիլ, և դադարեաց հողմն։ Ամբարձի պաչս ի բլրակէ անտի շրջահայել, և ահա չինութիւն իմն ոչ հեռի ի տեղւոջէն երեւիր. և ուրախացեալ հանգեայ անդէն սակաւ ինչ. և նկանակ մի հացի ընդ սպասաւորին կերի. և յորուցեալ դիմեցի ի չէնն, համարելով գտանել զդիպաւորութիւն իմն։ Իբրեւ շրջապատեցի զբոլոր պատուարն՝ որ մեծ արդեօք էր, և հասի ի դուռն, ծերունի ոմն պատահեցեալ՝ հարցմանս պատասխանեաց. Այս գերդաստան տեառն Սիմոնովիցի դատաւորին Լէօպոլոյ է, և չիք ի ներքս ոք, և տունքն ամայիք են. բայց եթէ խոնարհագոյն զինչանիցես՝ հուպ արդեօք է գեղ. և թերեւս գտանիցես դիպաւորութիւն ի նմին։ Այս դիմեցի զառիվայր, և դիպեցայ լճի, որոյ ի ծայրն երեւիր գեղ մեծ. այլ ծուխ և ոչ մի ելանէր, և զարմացայ. թանտէմ (tandem, և սակայն) գտեալ զկոպար լճին, անցի ի գեղն. և շրջեալ ընդ տունս բազումս՝ գտի զդրունս քակեցեալ և զոչ ոք ի ներքս. և վհատեցեալ նստայ ընդ խոտադիզաւ միով ի հանգչել. և յղեցի զսպասաւորն որոնել ընդ ամենայն չէնն, թերեւս գտանիցիւր ոք որ ժողովիցէր